ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ*

Սամվել Պողոսյան, Գենյա Ղռմաջյան

Բանալի բառեր՝ Հայկական կամավորական շարժում, հայկական պետականություն, Առաջին աշխարհամարտ, Արևմտյան Հայաստան, Կիլիկիա, Ռուսաստան, Ֆրանսիա:

Առաջին աշխարհամարտի առաջին իսկ օրերից բուռն քննարկման առարկա դարձան պատերազմին հայերի մասնակցության, ինչպես նաև Հայաստանի քաղաքական ապագայի հարցերը: Հայ գործիչների մոտ հույսեր էին առաջացել, որ հնարավոր է վերականգնել հայկական պետականությունը Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայկական տարածքներում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի միավորմամբ: Տվյալ պահին, պետականության վերականգնում ասելով, հասկանում էին լայն ինքնավարություն, որը հետագայում կտաներ դեպի անկախություն: Դա պայմանավորված էր այն տեսլականով, որ Անտանտի երկրները, առաջին հերթին Ռուսաստանը, կարող էին արագորեն ջախջախել թուրքերին և ազատել հայ բնակչությանը թուրքական վայրագ լծից:

Հայերը պատրաստ էին կռվելու ռուսական բանակի կողքին, արյուն թափելու, որպեսզի իրավունք ստանային պահանջելու ինքնավարություն կամ անկախություն: Դրանով էր պայմանավորված այն ոգևորությունը, որով հայերը ձեռնամուխ եղան կամավորական զորամասերի կազմավորմանը: Հետևաբար պետք է նշենք, որ կամավորական շարժումը պայմանավորված էր հայկական պետականության վերականգնման համար հիմքեր ստեղծելու ակնկալիքով:

1914 թ. նոյեմբերի 8-ին Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովին ուղարկած նամակում Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը հույս էր հայտնում, որ Ռուսաստանն ինքնավարություն կշնորհի Հայաստանին Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի սահմաններում, միաժամանակ հիշեցնելով, որ հայերը կռվում էին ռուսական զորքի կողքին [1]:

Այսպիսով՝ հայ կամավորական շարժման կազմակերպումը հնարավորություն էր տալիս հայերին հանդես գալու որպես պատերազմող կողմ և որպես այդպիսին պատերազմի ավարտից հետո Անտանտի երկրներին ներկայացնելու սեփական պահանջները որպես դաշնակից:

Պետք է նշել, որ հայերին բավականին հուսադրել էր 1914 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում ռուսական Նիկոլայ Բ կայսրի կողմից Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված խոսքը. «հայկական հարցը կլուծվի հայերի ցանկությունների համաձայն պատերազմի ավարտից հետո՝ խաղաղության բանակցությունների ժամանակ»[2]: Կայսեր խոսքերը մեծ ոգևորությամբ ընդունվեցին հայ ազգային-քաղաքական շրջանակների կողմից՝ սխալմամբ ընկալվելով այն տեսանկյունից, իբր ցարական կառավարությունն իրապես մտադիր է լուծել Հայկական հարցը՝ լայն ինքնավարություն շնորհելով Արևմտյան Հայաստանին ու Կիլիկիային:

---

* Հոդվածն ընդունվել է 27.02.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Վիրաբյանը: 10.03.20:
Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ թեմատիկ հայտի (18T-6A068 «Հայկական զինուժը 1914-1920 թթ.») շրջանակներում:

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է խոստովանել, որ այդ ժամանակաշրջանում ռուսական իշխանություններն իրենք դեռ քննարկում էին Հայաստանի ապագայի հարցը և վերջնական որոշման չէին եկել: Համենայնդեպս, հայության հույսերն ու ոգևորությունը պատերազմի առաջին ամիսներին բավականին մեծ էին:

Սիմոն Վրացյանը գրում է, որ այդ շրջանում կովկասահայության կարգախոսն էր դարձել «Ավտոնոմիա վեց վիլայեթների և Կիլիկիայի ռուսական պրոտեկտորատի ներքև»[3]:

Հայ նշանավոր հասարակական-մշակութային գործիչ Ալեքսանդր Ձիվելեգյանը հայկական տարածքային պահանջների մասին հոդված տպագրեց «Արարատ» և «Հորիզոն» պարբերականներում: Նա առաջարկում էր ինքնավար Հայաստանի մեջ միավորել Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի, Էրզրումի, Սեբաստիայի, Տրապիզոնի, Ադանայի վիլայեթները և Հալեպի վիլայեթի հյուսիսային մասը՝ Այնթապը, Մարաշը, Քիլիսը, Ուրֆան: Հայաստանի նավահանգիստը Սև ծովի ափին պետք է լիներ Տրապիզոնը, Միջերկրականի վրա՝ Ալեքսանդրետը և Մերսինը[4]: Նա վստահ էր, որ եթե Կիլիկիան անցնի բրիտանացիներին, ապա Բաղդադի երկաթուղու միջոցով պարսկական առևտուրը կհայտնվեր նրանց ձեռքում, իսկ Ռուսաստանը կկորցներ իր ազդեցության գոտին Պարսկաստանում: Հետևաբար, ռուս գործիչների ուշադրությունն էր հրավիրում այդ խնդրի վրա և որպես լուծում առաջարկում Կիլիկիան միացնել ինքնավար Հայաստանին[5]:

1915 թ. ապրիլի 18-ի կոնդակով Վեհափառը վերահաստատում է Պողոս Նուբարի լիազորությունները՝ որպես իր ներկայացուցիչ մեծ տերությունների ատյաններում[6]: Պ. Նուբարը, ստանալով Վեհափառի հանձնարարությունը, անմիջապես մեկնում է Կահիրեից և մայիսի 6-ին հասնում Փարիզ: Նույն օրը, Լոնդոնից ժամանելով, նրան դիմավորում է նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ Հակոբ Զավրյանը: Վերջինս Պ. Նուբարին ներկայացնում է Հայաստանի ինքնավարության մի ծրագիր, որը բխում էր Կաթողիկոսի՝ Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին և կայսր Նիկոլայ Բ-ին ուղղված գրությունների տրամաբանությունից, ինչպես նաև այն բանակցությունների արդյունքներից, որ տեղի էին ունեցել հայ քաղաքական գործիչների և Ռուսաստանի արտգործնախարարության միջև[7]:

Այդ ծրագրով ստեղծվելու էր ինքնավար Հայաստան՝ սուլթանի անվանական գերիշխանության տակ ու եվրոպացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ: Սուլթանը Հայաստանի ներքին գործերին միջամտելու իրավունք չէր ունենալու, երկրում թուրքական զորք չէր լինելու: Հայաստանը գտնվելու էր Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միացյալ խնամակալության ներքո: Ինքնավար Հայաստանն ընդգրկելու էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգները և Կիլիկիան՝ Մերսին նավահանգստով, իսկ Ալեքսանդրետը դուրս էր մնալու, որպեսզի խուսափեին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի դժգոհությունից ու ընդդիմությունից[8]: Այդ նախագծով, փաստորեն, նախատեսվում էր կազմավորել գրեթե անկախ հայկական պետություն՝ ինքնավարության անվան տակ:

Այդ ծրագրի վերաբերյալ Պետրոգրադում նախնական համաձայնություն էր կայացվել: Սակայն Ռուսաստանը որևէ պարտավորություն չէր ստանձնել, հատկապես՝ Կիլիկիայի մասով, քանի որ այդ երկրամասը Ֆրանսիայի ազդեցության գոտում էր, և հայերը պետք է սեփական ուժերով պաշտպանեին իրենց շահերը Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների հետ շփումներում: Հ. Զավրյանը Պ. Նուբարին տեղեկացրեց, որ Ֆրանսիան ու Ռուսաստանը գաղտնի համաձայնություն են կնքել, որով հաղթանակից հետո Ֆրանսիային էր անցնելու Կիլիկիան, իսկ Ռուսաստանին՝ Կ. Պոլիսը, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները: Սակայն վերջինս զղջացել էր այդ համաձայնության համար և ինքը, մնալով ստվերում, հայերին դրդում էր պահանջել Կիլի-

կիան՝ խոստանալով ինքնավարություն տալ Հայաստանին՝ վեց վիլայեթների և Կիլիկիայի սահմաններում[9]:

Ե. Ադամովը գրում է, որ այդ ժամանակ Միջերկրականում ազդեցության ոլորտ ձեռք բերելու միակ հնարավորությունը պետրոգրադյան կառավարության համար «անկախ» Հայաստանի գործոնն էր, սակայն Բրիտանիայի և Ֆրանսիայի կասկածներից խուսափելու նպատակով այդ ծրագիրը պետք է պաշտպանեին հայ պատվիրակներն առանց ռուս դիվանագետների միջամտության[10]:

Սակայն մեծ եղեռնի հետևանքով հայկական երկրամասերի հայաթափումը, ինչպես նաև 1916թ. մայիսին կնքված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը, որով Հայաստանը բաժանվում էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև, մի կողմ թողեց միացյալ հայկական ինքնավար պետություն ստեղծելու նախագծերը: Ռուսական իշխանությունները որոշեցին ցրել հայ կամավորական գնդերը, որպեսզի հետագայում հայկական կողմը ինքնավարության հարց չբարձրացներ: Դա խոր հիասթափություն առաջացրեց հայության բոլոր շրջանակներում:

1916 թ. հոկտեմբերին ֆրանսիական իշխանությունները բանակցություններ սկսեցին Հայ ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարի հետ՝ առաջարկելով Կիպրոսում կազմավորել հայկական կամավորական բանակ, որի դիմաց խոստանում էին ինքնավարություն շնորհել Սայքս-Պիկոյի համաձայնագրով Ֆրանսիային անցնող հայկական տարածքներին (Կիլիկիա, Սեբաստիա, Խարբերդ, Դիարբեքիր)[11]: Այդ ժամանակաշրջանում Ֆրանսիան ծանր մարտեր էր մղում Գերմանիայի դեմ և Մերձավոր Արևելքում զորքեր գրեթե չուներ: Հետևաբար, այդ տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու նպատակով որոշել էր կազմավորել Ֆրանսիայի դրոշի ներքո կռվող հայկական կամավորական բանակ: Այսպիսով՝ Ֆրանսիան խոստանում էր հայկական ինքնավար պետություն ստեղծել, որի դիմաց հայերից պահանջում էր մարտնչել իր կողքին: Հայերը դրական արձագանքեցին ֆրանսիական առաջարկին, քանի որ հիասթափվել էին ռուսներից և հույս չունեին, որ Ռուսաստանը ինքնավարություն կտար իր կողմից գրավված հայկական երկրամասերին: 1916թ. վերջերից Կիպրոսում սկսեց կազմավորվել Հայկական (Արևելյան) լեգեոնը, որին կամավորագրվեցին ավելի քան 4.000 հայեր:

1916 թ. դեկտեմբերի 28-ին Պ. Նուբարը Փարիզում հանդիպեց Ժորժ Պիկոյին: Ֆրանսիացի դիվանագետն առաջարկեց, որ Պ. Նուբարը հնարավորության սահմաններում պահանջի միասնական Հայաստանի ստեղծում Ֆրանսիայի հովանու ներքո, այդ թվում՝ Ռուսաստանին անցնելիք վիլայեթների միացումով: Պ. Նուբարը պատասխանեց, որ ֆրանս-հայկական կոմիտեի վերջին ժողովում նույնպես քննարկվել էր միացյալ Հայաստանի հարցը, և կոմիտեն խոստացել էր հարմար պահին օժանդակել այդ խնդրի լուծմանը[12]:

Այսպիսով՝ դերերը փոխվել էին, և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո: Իսկ Ազգային պատվիրակության նախագահը ստիպված էր համակերպվել և բավարարվել միայն խոստումներով, քանի որ ավելին պահանջելու համար ազդեցիկ լծակներ չկային:

Ինչպես տեսնում ենք, մեծ տերությունները պատերազմի ամենաթեժ պահին փորձում էին միմյանց ձեռքից խլել հայկական տարածքները՝ չհարգելով իրենց իսկ ստորագրություններով վավերացված գաղտնի ու հայտնի համաձայնագրերը: Բնական էր, որ պատերազմից հետո խաբելու էին նաև հույսն ամբողջությամբ Անտանտի վրա դրած հայ ժողովրդին:

1917 թ. միջազգային նոր իրավիճակ ստեղծվեց, երբ Ռուսաստանում փետրվարի 27-ին տեղի ունեցած հեղափոխության արդյունքում տապալվեց ցարական վարչակարգը, իսկ ապրիլի 6-ին Անտանտի պետությունների կողմից պատերազմի մեջ մտավ ԱՄՆ-ն:

Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը հանդես եկավ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիմքի վրա հաշտություն կնքելու հայտարարությամբ, միաժամանակ իր խնդիրներից մեկը համարեց ասիական Թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատումը[13]: Ռուսական կառավարության այդ դիրքորոշումը կրկին ոգևորեց հայ գործիչներին և նոր հույսեր արթնացրեց, քանի որ ցարական իշխանությունների վարած ոչ հայանպաստ քաղաքականությունը բավականին ծանր հիասթափության պատճառ էր դարձել:

1917 թ. մարտի 23-ին ժամանակավոր կառավարությանն ուղարկած նամակում հայությանը հետաքրքրող մի շարք հարցերի շարքում Կաթողիկոսը կրկին բարձրացնում էր Հայաստանի ինքնավարության հարցը. «Ես մեծայոյս եմ, որ վերանորոգուած Ռուսաստանը, քաջարի Դաշնակիցների համաձայնութեամբ, կստեղծէ Տաճկական նախկին վիլայէթների վրայ ազատ Հայաստան»[14]:

ԱՄՆ-ի մասնակցությունը պատերազմին՝ իբրև Անտանտի անդամ, նույնպես բավականին ոգևորեց հայ գործիչներին, քանի որ այդ երկիրը դիտարկում էին որպես ճնշված ազգերի պաշտպան:

Կոլոմբուսի (Օհայո, ԱՄՆ) համալսարանի պրոֆեսոր Ուիլբուր Սայբերտը, ներկայացնելով հայերի կրած տառապանքները և անվերապահ համակրանքը Անտանտի նկատմամբ, 1917 թ. մարտի սկզբին գրում էր. «Այս բոլոր փաստերն աչքի առաջ ունենալով՝ Հայաստանին ինքնավարություն շնորհելը ոչ միայն որպես սոսկ արդարության գործ է ներկայանում, այլ նաև անվիճարկելի պարտականություն համաձայնության տերությունների համար, եթե նրանք հաղթեն պատերազմում»[15]: Նա նաև նշում էր, որ հայերը ավելի բարձր զարգացում ունեն, քան շրջապատող ազգերը և արժանի են լիարժեք անկախության:

Արտաքնապես հայանպաստ հայտարարություններով հանդես եկավ նաև ֆրանսիական կողմը: Մայիսի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում վարչապետ Ալեքսանդր Ռիբոն հայտարարեց, որ իր երկիրը հրաժարվում է գաղութացման քաղաքականությունից[16]:

1917թ. ապրիլի 11-ին Կաթողիկոսին հղած նամակում Պ. Նուբարը տեղեկացնում էր, որ բավականին հուսադրված էր Ռուսաստանում ցարիզմի տապալումով և ժամանակավոր կառավարության հաստատումով, որի դրական վերաբերմունքը արևմտահայերի հանդեպ հայտնի էր: Նա հույս էր հայտնում, որ այժմ Հայկական հարցի լուծման ընթացքը կփոխվի, և ռուսական բանակի գրաված հայկական նահանգներին կտրվի այնպիսի վարչաձև, որը կբավարարի հայության ազգային ձգտումները: Նա Կաթողիկոսին հիշեցնում էր, որ ժամանակավոր կառավարության ԱԳ նախարար Պավել Միլյուկովը իր նախկին ելույթներում և հրապարակումներում բազմիցս անդրադարձել է Հայաստանին ինքնավարություն շնորհելու անհրաժեշտությանը: Նամակագիրը տեղեկացնում էր, որ նախորդ տարի Փարիզում Ֆրանս-հայկական կոմիտեի կողմից ռուսական Դումայի պատվիրակության ընդունելության ժամանակ Պ. Միլյուկովը Անատոլ Ֆրանսի հարցին պատասխանել է, որ ներկա պատերազմի գլխավոր նպատակներից են նահատակ ազգերին աջակցելը՝ առաջնահերթ նկատի ունենալով Լեհաստանին և Հայաստանին ինքնավարություն տալը: Պ. Նուբարը հույս էր հայտնում, որ Հայաստանի հարցում նա կպահի իր խոսքը, քանի որ պաշտոնի անցնելուց անմիջապես հետո արդեն իսկ կատարել էր Լեհաստանի վերաբերյալ տրված խոստումը: Հուսադրող էր նաև նախարար դառնալու առթիվ Պ. Նուբարի ուղարկած շնորհավորական հեռագրին Պ. Միլյուկովի պատասխանը. «Հայաստանի համար կանեմ այն ամենը, ինչ կարող եմ»: Ազգային պատվիրակության նախագահը Կաթողիկոսին տեղեկացնում էր, որ այդ տեսակետ ունեն նաև ռուսական կառավարության մյուս անդամները, քանի որ կառավարության ազդեցիկ անդամներից Ալեքսանդր Կերենսկին հարցազրույցում հայտարարել էր, որ Հայաստանին տրվելու է ինքնավարություն[17]:

Հայ գործիչները, օգտվելով միջազգային բարենպաստ թվացող նոր իրավիճակից, փորձում էին վերջնական լուծման հասնել Հայկական հարցում: Կրկին վերադարձ կատարվեց 1914 թ. առաջ քաշված միացյալ Հայաստանի գաղափարին:

Հետաքրքիրն այն է, որ որոշ գործիչներ նույնիսկ սկսեցին բարձրաձայնել անկախ հայկական պետության ստեղծման գաղափարը: Մինչ այդ, եթե չհաշվենք հատուկենտ անհատների առաջարկները, բարձրացվել էր միայն ինքնավարության հարցը, իսկ անկախությունը մինչև 1917 թ. թվում էր անիրականանալի երազանք: Անկախության գաղափարը հայության լայն շրջաններում դեռևս հասունացած չէր, և հետագա արագ զարգացող իրադարձությունների պայմաններում հայ գործիչները չկարողացան ժամանակին ճիշտ քայլեր ձեռնարկել անկախ պետականությունը վերականգնելու ուղղությամբ:

Ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականությունը բավականին ոգևորող էր: Այն ճանաչել էր Լեհաստանի անկախությունը, Ֆինլանդիայի և Ուկրաինայի ինքնավարությունը[18]: Ռուս գյուղացիության համագումարում նույնիսկ բարձրաձայնվել էր Հայաստանին լիակատար անկախություն տալու գաղափարը[19]:

Բնականաբար, այդ ամենը հայ քաղաքական մտքի գիտակցության մեջ սկսում էր սերմանել անկախության գաղափարը:

1917 թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի ժամանակավոր խորհրդի նիստում Ա. Ձիվելեգյանը ներկայացրեց հայության ձգտումները՝ Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ու Կիլիկիայի միավորմամբ ստեղծել անկախ պետություն, որը Շվեյցարիայի նման հավիտենական չեզոքություն պետք է ունենար: Նրա կարծիքով՝ պատերազմից հետո նորանկախ երկիրը տնտեսությունը վերականգնելու և թշնամիներից պաշտպանվելու կարիք կունենար, հետևաբար առաջարկում էր որոշ ժամանակով Հայաստանի մանդատը հանձնել Ռուսաստանին[20]:

Անկախության գաղափարի հասունացման և նույնիսկ գործադրման համար շուտով ավելի լուրջ կռվաններ ու հնարավորություններ են առաջ գալիս:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի խորհրդային իշխանությունը 1917 թ. նոյեմբերի 2-ին հրապարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը[21]: Այն ռուսական տիրապետության տակ ապրող ազգերին ազատ ինքնորոշման, ընդհուպ անջատման և ինքնուրույն պետություն կազմավորելու իրավունք էր տալիս: Իսկ 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակով արևմտահայերին իրավունք էր տրվում որոշել սեփական ապագան, նույնիսկ՝ անկախանալ[22]: Այսպիսով՝ ռուսական նոր իշխանությունները պաշտոնապես հրաժարվում էին Արևմտյան Հայաստանից և ճանաչում էին վերջինիս անկախանալու իրավունքը: Այդ քայլով Խորհրդային Ռուսաստանը հանդիսացավ առաջին տերությունը, որ ճանաչում էր անկախ հայկական պետություն կազմավորելու իրավունքը:

1917թ. նոյեմբերի 9-ին Պետրոգրադի հայկական զինվորական կոմիսարիատի խորհուրդը կազմավորեց պատվիրակություն (անդամներ՝ գեներալ Լ. Տիգրանյան, փոխգնդապետ Ն. Մելիք-Փարսադանյան, Հ. Ձավրյան), որը հաջորդ երկու օրերին հանդիպումներ ունեցավ ֆրանսիական դեսպան Ժոզեֆ Նուլանսի, Պետրոգրադում ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան զինվորական առաքելությունների ղեկավարներ գեներալներ Անրի Նիսսելի, Ալֆրեդ Նոքսի, Վիլյամ Ջյուջսոնի հետ[23]:

Պատվիրակության խնդիրն էր ստեղծված նոր իրադրության մեջ պարզել Հայաստանի և հայության ապագայի հարցը, դաշնակիցների նյութական ու ռազմական աջակցության հնարավորությունը:

Ֆրանսիական դեսպանը նշեց, որ հայերը Ռուսաստանի վրա հույս չեն կարող դնել և պետք է հենվեն սեփական ուժերի վրա: Վստահեցրեց, որ Ֆրանսիան պաշտպանում է անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը և պատրաստ է բարոյական ու նյութա-

կան օգնություն տրամադրել, եթե կազմավորվի հայերի վստահությունը վայելող և կառավարության պարտականություններ իրականացնող մարմին, որի հետ հնարավոր կլինի բանակցել[24]: Բրիտանական ներկայացուցիչ Ա. Նոքսը նշեց, որ իր կառավարությունը դեռ որոշում չի կայացրել, իրենք չեն կարող հենց այնպես հսկայական գումարներ և ռազմամթերք տրամադրել, նախ անհրաժեշտ էր համարում որևէ լավ կազմակերպված գործ տեսնել[25]: Գեներալ Վ. Ֆյուջսոնը պատասխանեց, որ պետք է սպասեն մինչև ռուսական կառավարության հարցը լուծվի, քանի որ հայերը միայնակ թուրքերին դիմագրավել չէին կարող, իսկ դաշնակիցները ճանապարհների բացակայության պատճառով չէին կարող օգնություն տրամադրել[26]:

Փաստորեն՝ Ֆրանսիան պաշտպանում էր անկախ Հայաստանի գաղափարը և պատրաստակամ էր օժանդակելու, եթե հայկական կառավարություն ձևավորվեր: Բրիտանական կողմը նույնպես ցանկանում էր կազմավորված կառավարություն տեսնել, որի հետ կկարողանային բանակցել և համագործակցել:

Բրիտանական վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը 1917 թ. դեկտեմբերի 21-ին Համայնքների պալատում հայտարարեց, որ «Հայաստանը այլևս նորից չի դրվի Թուրքիայի նողկալի տիրապետության տակ»[27], և պետք է ճանաչել Արաբիայի, Հայաստանի, Միջագետքի ազգային անկախությունը:

Նույն թվականի դեկտեմբերի 22-ին ԱՄՆ պետդեպարտամենտի կազմած հուշագրում առաջարկվում էր երաշխավորել հայերի ինքնավարությունը «ոչ միայն որպես արդարության և հումանիզմի կենսականորեն կարևոր հարց, այլ որպեսզի Փոքր Ասիայում վերականգնվի մի ժողովուրդ, որն ընդունակ է կանխելու Գերմանիայի կողմից Թուրքիայի տնտեսական մոնոպոլիզացումը»[28]: ԱՄՆ-ի պաշտոնատարները համոզված էին, որ պետք է «դաշնակիցների ուժեղ վերահսկողություն սահմանել Թուրքիայի էական մասը կազմող Հայաստանի նկատմամբ»[29]:

1918 թ. փետրվարի 7-ին ԱՄՆ Կոնգրեսում հայկական հարցին նվիրված ընդարձակ զեկուցումով հանդես եկավ կոնգրեսական (Կանզասից) գնդապետ Էդուարդ Լիթլը, որը նախկինում դիվանագիտական ներկայացուցիչ էր եղել Եգիպտոսում: Նա հույս հայտնեց, որ հնարավոր կլինի տերությունների հովանու տակ ներկայացուցչական կառավարություն հաստատել Հայաստանում: Այն ձգվելու էր Միջերկրականից՝ Մերսինից ու Ալեքսանդրետից մինչև ռուսական սահմանները: Ռուսաստանի հնարավոր բաժանման դեպքում նա համոզված էր, որ հնարավորություն կստեղծվի միավորել նաև ռուսական Հայաստանը: Կոնգրեսականը վստահ էր, որ այդ դեպքում հնարավորություն կստեղծվեր երկաթուղի կառուցել Միջերկրականից էրզրում, որտեղից այն կկապվեր Թիֆլիսի, Սև ու Կասպից ծովերի հետ: Նա վստահ էր, որ դա թույլ կտար մի քանի ամսում Հայաստանը դարձնել ժամանակակից աշխարհի մաս, կյանքը կլիներ ապահով, կրթությունն ու կրոնական ազատությունները՝ երաշխավորված[30]:

Ինչպես տեսնում ենք, կոնգրեսականը հարց է բարձրացնում կազմավորել միացյալ հայկական պետություն, որի մեջ մտնելու էին ոչ միայն Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, այլ նաև՝ Արևելյան Հայաստանը:

Մեր կարծիքով հայ քաղաքական ուժերը պետք է 1917 թ. դեկտեմբերին կամ 1918 թ. հունվարին հռչակեին Արևմտյան Հայաստանի անկախությունը և որպես անկախ պետություն փորձեին ռազմական ու նյութական աջակցություն ստանալ Անտանտի տերություններից: Իսկ վրացիների ու կովկասյան թաթարների հետ պետք է միայն Անդրկովկասի սահմաններում համագործակցեին: Հնարավոր տարբերակներից էր նաև Ֆրանսիայի հետ սերտ համագործակցություն հաստատելը, վերջինիս խոստանալը Հայաստանի մանդատը, եթե Կիլիկիան միանա հայկական պետությանը: Սակայն հայ քաղաքական միտքը պատերազմական ու հեղափոխական այդ թոհուբոհի մեջ չկարողացավ արագ և ճիշտ կողմնորոշվել:

Հայերը, նպաստավոր քաղաքական իրավիճակից օգտվելով, անկախություն հռչակելու փոխարեն 1917 թ. վերջերից փորձեցին համատեղ պետություն ստեղծել վրացիների և թաթարների հետ: Վերջիններս ունեին տարբեր շահեր ու որոշակի հակահայկական տրամադրություն, որի արդյունքում ռազմաճակատը ամրապնդել չհաջողվեց: Պանթուրքիզմի գաղափարներով ոգևորված կովկասյան թաթարներն ամեն ինչ արեցին թուրքական բանակի առաջխաղացումը արագացնելու համար: Վրացիները չկարողացան լուրջ դիմադրություն կազմակերպել թուրքական զորքերի դեմ և փորձեցին սեփական շահերն ապահովել հայերի հաշվին:

Հայերը միակ ուժն էին Անդրկովկասում, ովքեր կարողացան կազմակերպված բանակ ստեղծել, որին նպաստեց կամավորական շարժման դադարեցումից հետո վերակազմավորված հայկական գումարտակների գոյությունը: Հայերը միայնակ կարողացան մի քանի ամիս կասեցնել թուրքական առաջխաղացումը՝ թիկունքում անընդհատ դավեր նյութող վրաց-թաթարական տանդեմն ունենալով:

Մեր կարծիքով 1917թ. վերջին հայ գործիչները պետք է հռչակեին Հայաստանի անկախությունը, կազմավորեին կառավարություն և սեփական ուժերի վրա հենվելով կասեցնեին թուրքական բանակին, միաժամանակ կարող էին փորձել օժանդակություն ստանալ Անտանտի պետություններից: Սակայն դա չարվեց, և թուրքերը կարողացան հասնել մինչև Արարատյան դաշտ: Մայիսյան հերոսամարտերի արդյունքում թուրքերը ստիպված էին ճանաչել անկախ Հայաստանի գոյությունը:

Այսպիսով, կարող ենք վկայել, որ Առաջին աշխարհամարտի տարիներին բարձրացվեց Հայաստանի ինքնավարության հարցը, որ պատերազմի վերջնափուլում հանգեցրեց անկախ պետականության վերականգնմանը: Ռուսական և ֆրանսիական բանակների հայ կամավորական զորագնդերը նպաստեցին հայերի կողմից անկախության պահանջների առաջքաշմանը և մեծ տերությունների մոտ դրական տրամադրվածությանը հայկական պետականության ստեղծման նկատմամբ, ինչպես նաև նրանց մարտական փորձը օգտակար եղավ ազգային բանակաշինության գործընթացում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 76, թ. 2-3:
2. «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին», Երևան, 2001, էջ 22:
3. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 624:
4. Ձիվիլեգեան Ա., Ինքնավար Հայաստանի տերրիտորիան, «Արարատ», Ս. Էջմիածին, 1914, թիւ 12, էջ 1088:
5. Ձիվիլեգեան Ա., Կիլիկիայի հարցը, «Արարատ», Ս. Էջմիածին, 1915, թիւ 1, էջ 25-29:
6. ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 27, թթ. 30-31:
7. Նույն տեղում, գ. 28, թ. 187:
8. "Boghos Nubar's Papers and the Armenian Question (1915-1918). Documents", Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 80-84.
9. ՀԱԱ, ֆ. 430, g. 1, գ. 26, թ. 9:
10. "Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел", Под редакцией Е. А. Адамова, М., 1924, стр. 90-91.
11. Boghos Nubar's Papers, p. 393-397.
12. Նույն տեղում, էջ 422-424:
13. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 11:
14. ՀԱԱ, ֆ. 57, g. 5, գ. 144, թ. 15:
15. Сайберт Уилбур, Справедливость дарованиія независимости Арменіи,

“Армянскій вестникъ”, 1917, N 10-11, с. 6.
16. Boghos Nubar’s Papers, p. 437.
17. "Boghos Nubar’s Papers", pp. 431-433.
18. Керенский А., Россия на историческом повороте: Мемуары, Москва, 1993, стр. 158.
19. «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիւ 1, էջ 14:
20. "РЬчь А. К. Дживелегова въ совѣтѣ республики 20-го октября 1917 г.", “Армянскій ВѢестникъ”, 1917, N 43-44, с. 4.
21. «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», խմբագիր Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972, էջ 410-412:
22. «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 1960, էջ 156-157, նաև՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության … փաստաթղթերում», էջ 418-419:
23. Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 39:
24. Նույն տեղում:
25. Նույն տեղում, էջ 39-40:
26. Նույն տեղում, էջ 40:
27. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 19:
28. Նույն տեղում:
29. Նույն տեղում:
30. ՀԱԱ, Ֆ. 430, g. 1, գ. 584, թ. 5: Little Edward, Armenia and Turkey, “Congressional Record”, Washington, March 8, 1918, vol. 56, p. 8.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայկական պետականության վերականգնման խնդիրը և կամավորական շարժումը Առաջին աշխարհամարտի տարիներին

Սամվել Պողոսյան, Գենյա Ղռմաջյան

Ուսումնասիրությունը կատարվել է անտիպ և տպագիր վավերագրերի, տվյալ ժամանակաշրջանի մամուլի և որոշ ուսումնասիրությունների հենքի վրա: Պատմահամեմատական մեթոդի և պատմականության սկզբունքի միջոցով փորձ է արվել նորովի ներկայացնել խնդիրը: Առաջին աշխարհամարտի տարիներին հայ կամավորական շարժման գլխավոր նպատակը հայկական պետականության վերականգնումն էր: Սկզբնապես հայ գործիչները ձգտում էին լայն ինքնավարության, իսկ պատերազմի վերջնափուլում՝ անկախության: Ցարական կառավարությունը սկզբում որոշակի խոստումներ տվեց հայերին, սակայն հետագայում մերժեց հայկական ինքնավարության գաղափարը, իսկ հայկական կամավորական գնդերը ցրեց: Ֆրանսիան 1916թ. վերջին խոստացավ ինքնավարություն տալ Կիլիկիային, որի դիմաց հայերը կազմավորեցին Հայկական լեգեոնը Կիպրոսում: 1917թ. ռուսական հեղափոխությունների արդյունքում ստեղծվեց անկախ Հայաստան ստեղծելու իրական հնարավորություն, սակայն հայ գործիչները դեռևս պատրաստ չէին լիարժեք անկախության գաղափարին և չկարողացան արագ կողմնորոշվել: Իրադարձությունների զարգացումը ի վերջո տարավ Հայաստանի Հանրապետության կազմավորմանը: Պետք է նշել, որ եթե 1917թ. վերջին կամ1918թ. սկզբին հայ գործիչները հռչակեին անկախություն և սեփական ուժերի վրա հենվելով փորձեին կասեցնել թուրքական արշավանքը, ապա մայիսյան հերոսամարտերը կլինեին փետրվարին և ոչ թե Երևանի, այլ Երզնկայի կամ էրզրումի մատույցներում:

РЕЗЮМЕ

К вопросу о восстановлении армянской государственности и добровольческое движение в годы Первой мировой войны

Самвел Погосян, Геня Крмаджян

Ключевые слова: Армянское добровольческое движение, Армянская государственность, Первая мировая война, Западная Армения, Киликия, Россия, Франция.

Исследование проводилось на основе неопубликованных и печатных документальных материалов, прессы того периода и некоторых исследований. Сделана попытка по-новому представить проблему на основе историко-сравнительного метода и исторического принципа. Основной целью армянского волонтерского движения в годы Первой мировой войны было восстановление армянской государственности. Первоначально армянские деятели стремились к широкой автономии и, в конце войны, к независимости. Царское правительство сначала дало армянам некоторые обещания, но позже отвергло идею армянской автономии, и армянские добровольческие полки были рассеяны. Франция в конце 1916 года пообещал предоставить Киликии автономию, взамен армяне образовали Армянский легион на Кипре. 1917г., после русских революций, появилась реальная возможность создать независимую Армению, но армянские деятели еще не были готовы к идее полной независимости и не смогли быстро сорганизоваться. Со временем развитие событий привело к образованию Республики Армения. Следует отметить, что, если бы в конце 1917г. или в начале 1918г. армянские деятели провозгласили независимость и попытались бы остановить турецкое вторжение своими силами, то известные сражения состоялись бы в феврале, а не в мае, и не на подступах к Еревану, а при Ерзнке или Эрзруме.

SUMMARY

The issue of restoration of Armenian Statehood and Voluntary Movement during the World War I

Samvel Poghosyan, Genya Ghrmajyan

Keywords: Armenian Voluntary Movement, Armenian Statehood, World War I, Western Armenia, Cilicia, Russia, France.

The study was done on the basis of unpublished and printed documentaries, press of that period, and some studies. It's an attempt to present the problem in a new way through historical-comparative method and historical principle. The main purpose of the Armenian volunteer movement during World War I was to restore Armenian statehood. Initially, Armenians sought to a broad autonomy and, at the end of the war to independence. The Tsarist government initially made some promises to the Armenians, but later rejected the idea of Armenian autonomy, and the Armenian volunteer regiments were dispersed. In late 1916 France promised to grant autonomy to Cilicia, in exchange for which the Armenians formed Armenian Legion in Cyprus. In the result of Russian revolutions in 1917 a real opportunity was created to create an independent Armenia, but Armenian figures were not yet ready for the idea of full independence and were not able to orient quickly. Eventually the development of events led to the formation of the Republic of Armenia. It should be noted that if in late 1917 or in the beginning of 1918 Armenians declared independence and tried to halt the Turkish invasion on their own strength, then May heroic battles would be in February, and not in the outskirts of Yerevan, but at Erznka or Erzurum.